«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«08» հունիսի 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ԳԲԽ-18/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նորք-7» ՍՊԸ-ի 21.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Նորք-7» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 21.05.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-197» ծածկագրով գնման ընթացակարգին և իր ներկայացրած գնային առաջարկը եղել է ամենացածրը: Սակայն, «Նորք-7» ՍՊԸ-ն ստացել է հայտարարություն վերը նշված ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին:

Այնուհետև, «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարվել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի

միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 13.05.2015թ. հայտ է ներկայացրել «Նորք-7» ՍՊԸ-ն:

«Նորք-7» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է «Նորք-7» ՍՊԸ-ն՝ 4 606 250 ՀՀ դրամ, որից 4 331 250 ՀՀ դրամը ինքնարժեք և 275 000 ՀՀ դրամը՝ շահույթ, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից ճանաչված «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմել է 4 785 000 ՀՀ դրամ, որից 4 350 000 ՀՀ դրամը ինքնարժեք և 435 000 ՀՀ դրամը՝ շահույթ:

Ըստ «Նորք-7» ՍՊԸ-ի՝ «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի գնային առաջարկը պետք է գնահատվեր առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկի:

«Նորք-7» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2015թ. թիվ 6 արձանագրության «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքին ներկայացրած 22.05.2015թ. դիմումով՝ Ընկերությունն խնդրել է «Նորք-7» ՍՊԸ-ին Ընթացակարգով հաղթող մասնակից ճանաչել:

2. «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 08.06.2015թ. թիվ 206 գրությամբ ներկայացրել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2015թ. (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) ներառական սննդի փաթեթների համար գնումների պլանի համաձայն՝ նախահաշվային գինը կազմել է 6 815 232 ՀՀ դրամ (96 աշակերտ X 204 օր X 348 (1 միավորի գին)):

Պատվիրատուն տեղեկացրել է, որ թիվ 896-Ն հրամանի համաձայն՝ «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2015թ. համար նախատեսված գնումների պլանում ընդունվել և հաստատվել է որպես 1 միավորի (սննդի փաթեթ) գին՝ 348 ՀՀ դրամ:

Պատվիրատուն նշել է, որ կնքվել է համաձայնագիր 16.05.2014թ. կնքված պայմանագրի գումարի 20%-ը չգերազանցող չափով, որի գումարը կազմել է 587 981 ՀՀ դրամ: Այնուհետև, «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն հայտարարել է նոր ընթացակարգ, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չեղյալ է հայտարարվել և որից հետո վերահայտարարվել է:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ որպես ներառական կրթություն իրականացնող հաստատություն՝ ՀՀ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին և ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն մինչև «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման և որոշում կայացնելու օրը ԿԱՊԿՈՒ աշակերտների համար սննդի փաթեթներ ձեռք բերելու նպատակով փոխանցվել է սնունդի փաթեթ մատակարարող ընկերության հաշվարկային հաշվին 1 982 556 ՀՀ դրամ:

«Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնումների պլանում նախահաշվային գինը կազմել է 4 785 000 ՀՀ դրամ (125 աշակերտ X 110 օր X 348 (1 միավորի գին)): Ըստ Ընթացակարգի հրավերի՝ սննդի փաթեթների քանակը 13750 է:

Կենտրոնում 27.05.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը կրկին հաստատել է, որ «ԵԹ197ՀԴ-

ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով սննդամթերքի ձեռք բերման համար (2-4-րդ եռամսյակ) հատկացվել է ***4 785 000 ՀՀ դրամ***:

3. ԳԲԽ-18/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-18/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետի 29.04.2015թ թիվ 1052-Ա որոշմամբ հաստատված Հավելված 1-ի՝ Երևանի քաղաքապետարանի «Թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով՝ 2015թ. (1-4-րդ եռամսյակ) սննդամթերքի ձեռքբերման համար նախատեսվել է ***6 815 200 ՀՀ դրամ***:

2. «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Վ. Թադևոսյանի, 28.04.2015թ. թիվ 107-Ա հրամանի քաղվածքի համաձայն՝ Ընթացակարգի հանձնաժողովի 27.04.2015թ. N 3 զեկուցագրի հիման վրա, 2-4-րդ եռամսյակում ԿԱՊԿՈՒ աշակերտների սննդի փաթեթի ձեռք բերման համար հատկացվել է ***4 785 000 ՀՀ դրամ***:

3. «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որով պահանջվել է 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակում մատակարարել 13750 սննդի փաթեթներ:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Լիգա պլյուս», «Նորք-7» և «Ֆոտոն» ՍՊ ընկերությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2015թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության՝

- 4-րդ կետի համաձայն՝

Հ/Հ	*Մասնակցի*	*Գնային առաջարկներ (ՀՀ դրամ)*

	անվանումը	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գին*
1	«Լիգա պլյուս» ՍՊԸ	4350000	435000	0	4785000
2	«Նորք-7» ՍՊԸ	4331250	275000	921250	5527500
3	«Ֆոտոն» ՍՊԸ	4901920,83	59537,5	992291,67	5953750

- 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են նախատեսված ֆինանսական միջոցները:

4. ԳԲԽ-18/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նորք-7» ՍՊԸ-ի 21.05.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ի լրումն բողոքին ներկայացված 22.05.2015թ. դիմումը, «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 08.06.2015թ. թիվ 206 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 76-րդ կետի՝

- 15-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,

• 16-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն կնքվում է պայմանագիր:

Հրավերի 7.2.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի գինը, որը ներառում է կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում՝ հարկերը, չպետք է գերազանցի տվյալ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացման չափը, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը (5 527 500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ) գերազանցել է Պատվիրատուի գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը (4 785 000 ՀՀ դրամ) և, տվյալ դեպքում, Պատվիրատուն գործել է իրավաչափ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են նախատեսված ֆինանսական միջոցները:

Ինչ վերաբերում է Ընթացակարգով «Նորք-7» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելուն, ապա հայտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, որոնց համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման որոշում կայացնելու լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2015թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 5-րդ կետով «Լիգա պլյուս» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, առաջարկում ենք «Նորք-7» ՍՊԸ-ի 21.05.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-18/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան